Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կողմից անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՍԱ-22/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

13 հոկտեմբերի 2022թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Վ. Անդրեասյան, Մ. Անտոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	անխափան սնուցման աղբյուրներ	8 400 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 11.10.2022թ.-ին ժամը 15:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 12.10.2022 թ.-ին ժամը 15:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	էս Յե Թրեյդ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00220381, ք.Երևան Դավիթ Անհաղթ Փ.62 բն 165 հեռ. 095 59-01-11, arturtender@mail.ru
2	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	ՀՎՀՀ՝ 27959977, Ք.Երևան,Շիրազի փ. 2.6/5 հեռ. 099-50-50-60, arturtender@mail.ru
3	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00454717, ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37, հեռ. 098 40-05-59, alfaetalonam@gmail.com
4	Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30, հեռ. 091-40-40-73, khv_84@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՍԱ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հարցումներ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշ-վային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	անափան սնուցման աղբյուր-ներ	1.էս Յե Թրեյդ ՍՊԸ	8 400 000	10000000	20 %	12000000	5800000	20 %	6 960 000	
		2.Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի		6950000	20 %	8340000	5900000	20 %	7 080 000	
		3.Ալֆա-Էտալոն ՍՊԸ		7000000	20 %	8400000	6091470	20 %	7 309 764	
		4.Էյչ Գրուպ ՍՊԸ		8400000	20 %	10080000	8400000	20 %	10 080 000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է **12.10.2022թ.-ին** և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«էս Յե Թրեյդ» ՍՊԸ-ն:**

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«էս Յե Թրեյդ» ՍՊԸ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված Հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) սխալ է նշված տվյալ հավելվածի համարը՝ գրված է Հավելված 1.3, սակայն պետք է գրվեր Հավելված 1.2 :
- Ներկայացված Հավելված 1.2-ում 1.1.2 կետում (Անվանումը լատինատառ) նշված անվանումը չի համապատասխանում ընկերության հայերեն տառերով գրված անվանմանը:
- Ներկայացված Հավելված 1.2-ում 1.1.6, 3.3.1 և 3.4.1 կետերում հարկավոր է հապավումի փոխարեն գրել ամբողջական անվանումը:
- Ներկայացված Հավելված 1.2-ում 1.3.3 կետում (Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը) բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:
- Ներկայացված Հավելված 1.2-ում 3.3.3 և 3.4.3 կետերը ենթակա են շտկման՝ վարչատարածքային միավորը պետք է նշվի ք. Երևան:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի արտադրողի անվանումը սյունյակում 1-ին չափաբաժնի համար հստակ նշված չէ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրից պետք է հանվեն «կամ համարժեքը», «ոչ պակաս», «առնվազն» արտահայտությունները և հստակ նշվի տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՍԱ-22/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 13.10.2022թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«էս Յե Թրեյդ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 17.10.2022թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 17.10.2022թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 17.10.2022թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **«Էս Յե Թրեյդ» ՍՊԸ** -ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

- **«Էս Յե Թրեյդ» ՍՊԸ -ի** հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

17.10.2022թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- ✓ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Էս Յե Թրեյդ» ՍՊԸ**–ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ **Գագիկ Արշակյան**

անդամներ՝ _____ **Վահագն Մկրտչյան**

_____ **Վահրամ Անդրեասյան**

_____ **Մերի Անտոնյան**

քարտուղար՝ _____ **Սիրուշ Նազարյան**